

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱխԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈւԿՐԱԻՆԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱխԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Ուկրաինայի ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ձգտելով զարգացնել և ընդլայնել փոխհարաբերությունները ֆինանսական, հարկային, դրամավարկային և տնտեսական համագործակցության այլ ոլորտներում, որոնք համապատասխանում են միջազգային շուկայի պահանջներին և փորձին,

նպատակ ունենալով աջակցելու Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջազգային արժույթային համագործակցությանը,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի տնտեսական զարգացման բնագավառում կատարվող զգալի փոփոխությունները,

ելնելով առաջադրված խնդիրների արդյունավետ լուծման փոխադարձ հետաքրքրությունից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը կաջակցեն համագործակցության խորացմանը, մշտական խորհրդակցությունների անցկացմանը և փորձի փոխանակմանը ֆինանսավարկային հարաբերությունների հարցերում, մասնավորապես.

- տնտեսական ինքնուրույնության և շուկայական հարաբերությունների անցման պայմաններում ֆինանսական մարմինների կազմակերպչական կառուցվածքի վերաբերյալ,

- բյուջեի ձևավորման և կատարման գործընթացների արդիականացման վերաբերյալ,

- հարկերի, տուրքերի և այլ մուտքերի (ուղղակի և անուղղակի հարկեր) արդյունավետ համակարգի

ձևավորման հիմնական սկզբունքների և մոտեցումների վերաբերյալ,

- շուկայական տնտեսության պայմաններում բնակչության սոցիալական պաշտպանվածության արդյունավետ մեխանիզմի և վերջինիս ֆինանսավորման աղբյուրների ձևավորման վերաբերյալ:

Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղությունների շուրջ համագործակցությունը ձեռք կբերվի Կողմերի միջև առանձին պայմանավորվածություններով:

### Հոդված 2

Ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով Կողմերը կաջակցեն 1996 թ. մայիսի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ուկրաինայի Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրի դրույթների իրագործմանը:

### Հոդված 3

Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում գտնվող հարցերի առնչությամբ կստեղծեն բարենպաստ պայմաններ փորձի փոխանակման, այդ թվում՝ համապատասխան մասնագետների փորձառության, գիտագործնական համաժողովների և սեմինարների անցկացման համար:

### Հոդված 4

Անհրաժեշտության դեպքում Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող արձանագրություններով:

### Հոդված 5

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

### Հոդված 6

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է նման ծանուցում ստանալու օրվանից երեք ամիս հետո:

Կատարված է Կիև քաղաքում 2011 թվականի հուլիսի 1-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը կդիմեն ռուսաց լեզվով շարադրված տեքստին:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. սեպտեմբերի 28-ին*